

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԱՀԱԳԱՆ

բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,

ԳՊՀ հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ,

ԳՊՀ դասախոս

էլփոստ՝ vachik-grigoryan@mail.ru

Էպոսի ողբերգական կերպարը Մհերն է վերջին ճյուղում: Նա այլևս գործելու, արարելու հնարը չունի, Մհերը պարտադրում է գոյության նոր ձև, առաջին հերթին մարդկությանն առաջնորդում է սեփական ինքնաճանաչողության ուղիով վերածնունդ, երբ զենքն այլևս դրվում է մի կողմ, երբ բոլոր նախորդ ժամանակներն անցյալ են և գալու է նոր ժամանակ՝ հոգևոր արժեքների, մարդկային բարձր որակների ժամանակը: Ինքնահայեցման գործընթացը Մհերի կերպարում դառնում է առաջնային: Նա քրդի շոր ունի հագած, և դա հազիվ թե եղել է նրա կամքով: Հավաքափոխությունը սասունցու էության մեջ ծանր հեղուկանքներ է թողել: Մհերի կերպարը ձեռք է բերում նոր փարոզություն: Ագռավաքարը ոչ միայն սեփական ինքնության որակները խառնակ ժամանակներից պաշտպանելու վայր է, այլև ինքնահայեցման, սեփական ինքնության ակունքներին վերադառնալու ներքին պահանջ: Սեյլանի ներկայացրած ավանդությունն ուղղակիորեն ակնարկում է սեփական ինքնությանը վերադառնալու անհրաժեշտությունը: Հայ ժողովրդական վեպը չէր կարող չարձագանքել այս իրողությանը: Էպոսագեպները իրենց ուսումնասիրություններում չեն անդրադարձել Սեյլանի «Սասուն» ստեղծագործության և «Սասնա ծռեր» էպոսի միջև եղած կապերին: Մինչդեռ Սեյլանի ստեղծագործությունը ինչպես ժողովրդական ավանդույթների արձանագրմամբ, այնպես էլ Սասունում թշնամու դեմ պայքարող հերոսներով բացահայտում են ժողովրդի էպիկական մաքառումների ընթացքը՝ համառ ու տևական: «Սասուն»-ի և «Սասնա ծռեր»-ի միջև եղած ընդհանրությունները ակնհայտ են ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի իմաստով: Ընդհանրություններն առկա են ինչպես մարդկային բնավորությունների, նրանց գործողությունների իմաստով, այնպես էլ ներքին փիլիսոփայությամբ: հավաքափոխությունը նոր շերտեր է ավելացնում հերոսների նկարագրի մեջ:

Բանալի բառեր՝ Սեյլան, «Սասունցի ծռեր», Արծրունի, Գնունի, կերպարանափոխություն, «Պարսից պատերազմ», «Տարոնի պատերազմ», կրոնափոխ, Վարդապետ Մարտիրոսյան, Սուրբ Կարապետ:

Սեյլանը հայ մշակույթի երախտավորներից մեկն է՝ հանիրավի անտեսված:

1890-ական թվականներին հրատարակել է չորս գիրք: 1890 թվականին Պոլսում լույս է տեսել «Բախտի մեկ խաղը» վիպակը, 1892 թվականին Թիֆլիսում «Խան-Միրան» ավանդությունը, 1904 թվականին Ալեքսանդրապոլում «Լեոն Կայսր» և Թիֆլիսում՝ «Հայթաֆիրատ»:

1910 թվականին մի խումբ եվրոպացի գիտնականների հետ բարձրացել է Արարատի գագաթը:

1894 թվականին /հ. 10, էջ 1465/ «Մուրճ»-ում տպագրվում է նրա «Սասուն»-ը: «Անկասկած է, որ յուր այդ աշխատությունով պ. Սեյլանը մի մնայուն գործ է կատարած գրականության համար և մասնավորապես մեր նորագույն պատմության համար»¹:

«Սասուն»-ը ոչ միայն պատմական բնույթի երկ է, այլ նաև լեցուն է ժողովրդական ավանդություններով: Ճիշտ է այն ներկայացնում է ավելի ուշ ժամանակաշրջանի դեպքեր ու իրադարձություններ, բայց դրանք օրգանական շարունակությունն են այն պատմության, որ հիշատակում է Մ. Աբեղյանը:

Այն սկսվում է ներածությամբ, որ ունի բնաբան.

Երթամ Սասուն, բերիմ թալան,

Կալի էզներ բերիմ լըծկան,

Կտրիճ Հաուն էնիմ խնդիր,

Տնկլուզ մանցին Հաուն ճժիր...

Ավանդությունից

Այնուհետև բերում է հսորենացուց բերված հատվածը՝ Նոյի թոռ Սիմը լեռն իր անունով Սիմ է կոչել /Ա, գ/:

Հեղինակի համար միանգամայն իրական են առասպելական հերոսները: Նա իր պատմությունը օրգանական շարունակությունն է համարում Սանասար-Ադրամելիք արքայազանց բերդ-բնակավայր «Քաղքիկն»: Նույնը կատարվում է և հերոսների պարագայում:

«Պատմեցի իմ պատմությունը, ականա հիշեցի ընկերներիս, Սասնո անցյալը, մեծամեծ դեմքերը Սանասարից մինչև մեր օրվա հերոսը, Գորպեն՝ որ առաջնորդում էր ինձ առյուծների հայրենիքը. . . »²:

1890-ական թվականներին Սասունը, դրա գյուղերի մեծ մասն արդեն քրդաբնակ էր: 110-120 քրդական գյուղեր, 60՝ հայկական:

¹ Մուրճ, 1895, հ. 5, էջ 726:

² Սեյլան (Արշակ Մատոյան), Սասուն, Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, 1990, էջ 29:

Սարերի մեջ ապրող «ժողովուրդը խիստ առողջ, կարճահասակ, թխադեմ, ճարպիկ, անվախ, չարքաշ լինելով՝ հային տալիս է յուր պարծանքը, առյուծասիրտ սասնիկը»¹:

Նա ժողովրդին երեք «աստիճանների» է բաժանում.

ա/ Սասնո անմատչելի լեռներում, անդնդախոր ձորերում աչքից փախչելով ապրում են վայրենիներ, որ ոչ խոսիլ, ոչ հագվիլ գիտեն, միայն սովի ժամանակ, երբ սարերը չեն տալիս խոտ, ծառերը՝ միրգ ու տերև, հայտնվում են գյուղերում իբրև գազան:

բ/ Կիսավայրենիներ՝ կոպիտ ձևով շալե շապիկ հագած, գազանի կամ այծի մորթով իրենց քամակը ծածկած, ապրում են իբրև ավազակ՝ մերձակա գյուղերից գողանալով, կամ մի քանի այծ ու ոչխար պահելով:

գ/ Ռամիկ, որ գիտեն պաշտել Աստված, հագվիլ քրդի նման, դիմագրավել թշնամուն:

Արեղյանն ասում է, թե ինչ վիճակ է ունեցել Սասունը թաթարների տիրապետության ժամանակ և դրանից հետո, «բավականին մութն» է: Բայց դա շատ էլ կարևոր չի համարում, քանի որ վեպի էական կողմերն արդեն մեծ մասամբ պարզվում են Սասունի պատմության մինչև 13-րդ դարի կեսերը, երբ Սասունում դեռ հաստատված չեն քրդերը կամ նոր են մուտք գործում:

14-րդ դարում քրդերն արդեն հաստատված են Սասունում և Սասունը ենթարկված է թուրքմեններին: «Մեր վեպի մեջ սակայն Սասունի բնակիչները միայն հայեր են և սասունցիները պայքարում են Բաղդատի խալիֆայի և Մսրա Մելիքի դեմ: Մի երկու պատումում միայն հիշվում են քրդեր, և նույնիսկ Մսրա Մելիքը քուրդ է անվանվում, ինչպես որ էին իրոք Էդիլն և իր ժառանգները: Վեպն ուրեմն էապես մնում է իբրև հիշողություն մինչև 13-րդ դարը կատարված դեպքերի»²:

13-րդ դարից հետո Սասունի պատմությունը աչքի չի ընկնում պատմական փաստերի առատությամբ: Այս իմաստով շատ կարևոր են Սեյլանի վկայությունները, դրանք ինչպես պատմական տեղեկություններ են, այնպես էլ ավանդություններ, որոնք բացահայտում են ժամանակի դեմքը, դրա բնույթը: *Խոսքը տարածաշրջանի քրդացման ընթացքի մասին է:*

Ղազարոս Մարտիրոսյանը, որ Սուրբ Աղբերաց վանահայրն էր, տեսել և կարդացել է Սղերդում Տեր-Ջաքարիա քահանայի մոտ 1300-1600 թվականների պատմությունը, որտեղ առավելաբար պատմվել է քրդերի հարստահարումների, տարածաշրջանի քրդացման ընթացքի մասին: «Երբեմն դոքա՝ ոշկոցիք (Ռշտունի), մանըգցիք (Մամիկոնյան), սիվանցիք (Սլկունի), բագրանցիք (Բագրատունի), փնճնացիք (Փնճիկ իշխանի սերունդն), խորոմանցիք (Խորխոռունիք) պճնազարդ ուղեկցում էին Հայոց Մեծաց թագավորին. կարծես այդ ընկած փառքի հիշատակը

¹ Անդ, 31:

² Մանուկ Արեղյան, ԵՐԿԵՐ, Ա, Ե., 1966, էջ 371:

անջինջ պահելու համար՝ տակավին հայոց ասպետական սովորությունքը, աստիճանքը պահում են նոքա»¹:

Նրանք իրենց հայկական ծագումը չեն մոռացել և պահում են դարերից եկած սովորությունները, նաև հավատը: Մանավանդ խորոմանցիք քրդի, թուրքի և հայի առաջ խոստովանում են իրենց հայությունը: Սրանք 1870-1872 թվականներին կամեցան հայանալ, «միանալ ազգին», բայց կառավարությունն արգելեց: «Սակայն նույնն է խորոմանցին, փոխված չէ»²: Նրա բնակավայր-հայրենիքը «Գուզիզանի, Տյուրզի (Տորոս) լեռների երկայնքով, Երզնկայից (Երիզա), մինչև Կեսարիա, Բիրուդ ու Ջեյթուն բռնած են իբրև բնավայր և հայրենիք»:

Քրդերն ու տաճիկները նրանց սահմանից սարսափով են անցնում: Թեև գնալով զգալի էր դառնում մուսուլման տարրը՝ «գարագոյունլու, որ այժմ կրում են ղզլպաշ, թուրքմեն, չրափյուֆ (կրակ մարող) անունները, սակյան գլխավորապես աչքի է ընկնում խորոմանցին, թրքական անունով, հայացի սրտով»³:

Ամեն պարագայում «քրդերին միացան և ուրացյալ հայ նախարարներ»: Բագրանցիք մինչ օրս չեն ուրանում իրենց ծագումը, բեկերն իրենց զավակներին անվանում են Բագրո (Բագրատ), Համզո, Համո, Սմբո (Սմբատ), այս անունները հատուկ էին հայ նախարարական ընտանիքներին:

Սեյլանը Վարդապետ Մարտիրոսյանի ասածները, որ վերցրել է Օհան եպիսկոպոսից, փորձում է ստուգել տարեց մարդկանց միջոցով:

Հայ նախարարներից առաջին ուրացողը Բագրատ Պատրիկ Բագրատունին չի եղել, ինչպես որ վկայում է Թովմա Արծրունին, նրանից առաջ եղել են ուրիշները: Բագրատունի հարստության շենքը քայքայվեց, մնացին նախարարների ստվերները, մանր իշխաններ՝ Արծրունի, Գնունի, Մամիկոնյան և այլն, աստիճանաբար սրանք ևս սուզվում են մահմեդականության խորքը, այնպես որ մինչև «ԺԵ դարի վերջերը ջնջվում են Հայաստանից բոլոր փայլուն անունները...»⁴:

Սեյլանի վկայությամբ՝ մինչև 1540-60 թվականները Պուլանըքի (Հարքա) Բաղեշի, Սասնո, Մշու վրա, իրենց գավառներում, իշխում էին հայ նախարարներ՝ որպես բեյեր, թեև մահմեդականներով խառն էին այդ գավառները:

Սեյլանը պատմում է երեք նախարարների միջև ծագած պատերազմի մասին, որն իր խորքի մեջ առնչվում է «Մուշեղի վեպին»: Այստեղ անունները ևս առկա են, պատմության մեջ փոփոխված տեղեր կան և այլն:

«Մշու Մամիկոնյան, Մուշեղ Նաճաշ իշխան, տեր Յրոնից և Աստղաբերդի (Աստղկա բերդ), Հարքա իշխանի դուստր Գուլիզարին կնության է խնդրում, երբ

¹ Սեյլան, 34

² Անդ, 35:

³ Անդ, 35:

⁴ Անդ, 36:

մերժում են՝ ուզում է բռնի հափշտակել, որ նշանված է եղել Բաղեշի Փնջիկ իշխանի որդու հետ»¹:

Ռուսայի դաշտում, ուր Մամիկոնյան Տիրանը ընկավ հազարացիների սրից, նրա վերջին իշխան շառավիղը փառավոր հաղթանակ է տանում՝ Փնջիկի զորքը սրի ու փախուստի մատնելով:

Այստեղից սկսվում է սեփական արմատներից հրաժարվելու հետևողական գործընթացը: Փնճիկը շուտով ուրանում է իր կրոնը և օգնություն է խնդրում Տուրուբերանի Աղձնյաց և Բարձր Հայոց ընդհանուր իշխան Մահե ամիրայից (նախահայր Մուսա-բեկի), որ քուրդ էր, նրանից ստանում է բավականաչափ վարձկան քրդեր և Մահեի եղբոր ընկերակցությամբ իջնում է ասպարեզ: Մուշեղ Նաճաշ Մամիկոնյանը երկնչելով հակառակորդի մեծաքանակ ուժից, բռնում է նույն ճանապարհը, ինչ որ Փնջիկը, նա Տիգրանակերտի իշխան Շուղեք ամրոցի ամիրայից ստվարաթիվ զորքով Մոխր գյուղի շրջակայքում, ապա Կելառեշ գյուղում, «Գայլ-Վահանի քաջագործության վայրերը ողողվում են փնճիկյանների արյունով: Հաղթությունից հետո պատգամավորություն է ուղարկում Պուլանքը, պահանջում Գյուլիզարին: Վերջինս իր «ազնիվ հոր» հետ սգում են ստեղծված կացության աղիթով, ապա պատգամաբերներին անպատվելով ետ են ուղարկում՝ «մենք քրդի հետ գործ չունենք»²:

Հետագա գործողությունը կապված է հավատացյալ քրիստոնյաների և քրդերի բախումների հետ: «Հարձա իշխանը, որի անունը չկա,- որ շատ իրավունք ունենք կարծելու Երան-Հայկազը, կամ նրա հաջորդներից, որովհետև այս ավանդության մի քանի մասերը նման են նրա ավանդական պատմության,- իսկույն հավաքում է յուր բոլոր զորությունը, ամրացնում է յուր ամրաշեն ամրոցը, զորքի մի մասն առած յուր զորավարության ներքո դիմավորում է անթիվ թշնամի զորաց Կոփ գյուղին ընդառաջ»³: Երկու հավատափոխ առաջնորդներն այլևս իրենց առաջ մեկ ընդհանուր հակառակորդ են տեսնում: Քանի որ Մուշեղ Նաճաշն արդեն մերժում էր ստացել Գյուլիզարից, ուստի հաշտվում է Փնճիկի հետ, որն արդեն կիսով չափ փոխել էր անունը՝ Փնճար:

Սեյլանի վկայությամբ՝ հենց այդ անունն էլ այսօր կրում է նրա ելուզակ ցեղը: Երկու ուրացյալները իրենց զորքով մեծ կռիվ են մղում Կոփի առաջ: Սոսկալի կոտորածի ընթացքում ընկնում են Կոփա իշխանը, բերդի պաշարման ժամանակ սուրը ձեռքին ընկնում է նաև Գյուլիզարը: Իշխանի երեք մանուկները գերվում են: Ավերվում է բերդը, և այս կռվի մեջ «մեռնում են հայոց նախարարությանց անունները»:

¹ Անդ, 36:

² Անդ, 37:

³ Անդ:

Բայց սրանով չի ավարտվում ողբերգությունը: Երեք մանկիկներին հանձնում են Հասարան թոփալ մոլլային, որ նրանց դաստիարակեց որպես մահմեդականների:

«Քրիստոնյա հերոս հոր որդիքը դառնում են մեծամեծ քուրդ ցեղերի նախահայրեր: Իրենց բնիկ հայրենյաց մեջ զարգանում են հասարանցի, հայտարանցի և ճիպրանցի ցեղերը, իբրև ժառանգներ Հասարան մոլլայի» (38):

Անշուշտ, այս ավանդությունը կապվում է ինչպես այլ ժողովուրդների, այնպես էլ մեր նախահայրերի պատմություններին, երբ ցեղի առաջնորդի անունով կոչվել են ցեղախմբերը կամ ժողովուրդները:

Շարունակության մեջ Սեյլանը հնարավորինս հանգամանորեն ներկայացնում է պատմությամբ զգեստավորված ավանդության շարունակությունը, որ ժողովրդի ողբերգական ճակատագրի հետագա ընթացքն է ու միաժամանակ ժողովրդի մեջ դեռևս պահպանվող Մուշեղի վեպի յուրատեսակ շարունակությունը՝ արդեն նոր պայմաններում:

Փաստորեն դա մի ժամանակ էր, երբ «Սասնա ծռեր»-ի Դավիթը դեռ չէր փոխարինել Մուշեղ Մամիկոնյանին: Վերջինիս մասին պատմությունները ավանդությունների ձևով դեռևս շարունակում էին մնալ նրա հետնորդների հիշողության մեջ: Եթե Մ. Աբեղյանի համգամանալի ու խոր մեկնաբանությունների արդյունքում պարզվել է, որ «Պարսից պատերազմը» իր հիմնական հերոսներով փոխանցվել էր «Տարոնի պատերազմի» մեջ, բայց իրականում տեղի էր ունեցել արմատական փոփոխություն՝ Հայոց երկիրը մշտական պատերազմների մեջ էր պարսիկների դեմ, և խոսքը պետության, նրա թագավորի արժանապատվության և պետության իրավունքի մասին էր, ապա «Տարոնի պատերազմ»-ում այս խնդիրը համեմատաբար նեղացել է, սահմանափակվել էր Տարոնի սահմաններում:¹

«Տարոնի պատերազմ»-ով չի ավարտվում ամեն ինչ, ժողովրդի պայքարը մտնում է մի նոր փուլ՝ տևական ու համառ: *Բայց այս անգամ մաքառումները գրեթե զինված բախումների չեն տրանում և եթե տրանում են, ապա դրանք այլևս որոշիչ չեն էթնոսի պահպանման ճանապարհին: Պայքարը մտնում է հոգևոր փուլ, հավատի հարցը դառնում է կարևոր, քանի որ ինքնությունը պահելու ճանապարհին այն միակ զորավոր կռվանն է՝ ժամանակի մեջ գոյատևելու համար:*

Պարզվում է՝ ամեն ինչ այնքան էլ միանաշանակ չէ. պարտադրված հավատափոխությունը սասանում, բայց և չի ոչնչացնում մարդու ինքնությունը, հակառակ դեպքում ինչպես հասկանալ այն իրողությունը, որ Սեյլանի վկայությամբ՝ խորոմանցիք, որ թվով երկու հարյուր հիսուն հազար էին, բացահայտ խոստովանում էին իրենց հայ լինելը և «անասելի լուտանքով ողորդում են Մուհամմեդն ու իր Ղուրանը»: Նրանք 1870-1872 թվականներին կամեցան «հայանալ, թոթափել դիմակը,

¹ Աբեղյան, ԵՐԿԵՐ, Ա, Ե., 1966, էջ 322:

միանալ ազգին, ի ցավ մեզ, կառավարությունն արգելեց: Սակայն նույնն է խորոմանցին, փոխված չէ»:¹

Այս եզրահանգումը՝ «խորոմանցին փոխված չէ», խոսում է էթնոսի ինքնությունը պահելու ջանքերի մասին, որ թևակոխել է «հոգևոր ոլորտ»՝ տևական ու համառ: Արդյո՞ք մահմեդականացման գործընթացը հախռեց ամեն ինչ և իրենով արեց քրիստոնյաների արյունը: Դժվար է միանշանակ պատասխանի հանգել: Սեյլանն էլ տեսնում է սասունցիների ճակատագրի հետագա ընթացքը, որ հայության մի ստվար մասի ճակատագրի ընթացքն է:

Եվ ինչպես «Պարսից պատերազմ»-ում ու «Տարոնի պատերազմ»-ում ժողովրդական ավանդույթը դառնում է սյուժեն առաջ մղող գործոն, այնպես էլ այստեղ այն լրացնում է «պատմագրության» թերին: Սեյլանը զրուցում է Սասունի երբեմնի հզոր իշխանի՝ Մուշեղի ցեղի ներկայացուցչի հետ:

«...Պապս թվում է իմ հայ պապերից՝ Մամիկոնյան Մուշեղ, Նաճաշ, Մեծն-Մուշեղ, Վարդան պատրիկ, Մուշեղ սերասքյեր (սպարապետ) իմ նախնյաց մեջ նշանավոր են եղել, մենք երկնային թագին արժանացած ենք, մեր սուրն օրհնած է ձեր ջիրճիզ (Լուսավորիչ) փեղեմպերը, մեզ իշխան ճանաչած է ձեր այն ժամանակի թագավորը: Մուշեղ-Նաճաշ թեև ուրանում է յուր կրոնը և ընդունում ուղղափառություն (թրքություն), բայց Մշու մեջ, յուր տան մեջ ծածուկ է պահում մի փոքրիկ թեքքե (մատուռ), նորան ծառայում է ինքն մինչև մահը և ավանդում յուր որդվոցը, հասնում է մինչև իմ պապին և ինձ»:²

Պատանին խոսում է և իր ցեղին ավանդված գաղտնիքի մասին: Երկաթե դռնակով փակված պահարանում պահվում է արծաթյա գլան՝ կես արշին երկարությամբ, դրանում պահվում է «անգին գանձը», որ կնքված է «ջիրճիզ-փեղեմպերին և ձեր թագավորի կնքած հրովարտակը»: Դրանով Սիլվան, Սասունը և Մուշը հանձնվել է իր մեծ պապին: Անկարելի է տեսնել արծաթյա գլանը, դա «սրբազան ավանդ», «թալիսման» է Մուշեղի ցեղի համար: Այն պիտի բերի «ապագային մեզ մեր նախկին մեծությունը, իշխանությունը. երբ քաֆրը, ֆլայը (հայ) վերստին տիրե յուր բնիկներին, այն ժամանակ կբացվի ջիրճիզի գիրը»:³

Այս սրբազան գաղտնիքի մասին գիտեն տաճիկները, կառավարությունը, մի քանի անգամ փորձել են առգրավել թալիսմանը կամ ավերել մատուռը, բայց ապարդյուն, քաջակորով պապերը սրով պաշտպանել են սրբությունները:

Հետագա շարադրանքում քրդացած պատանին մեկ անգամ ևս կրկնում է, որ հրովարտակը միայն «հայ քաֆրի թագավորի» ձեռքը պիտի բանա: Վահան-Նաճաշի ցեղից հասակավոր մեկը պատմում է գրեթե նույն պատմությունը: Զրուցակիցները վկայում են, որ Սիլվան ցեղը Նաճաշների դասակիցն է, Սասունը նրանց ձեռքում է:

¹ Սասուն, էջ 35:

² Սեյլան, Սասուն, 38

³ Անդ, էջ 39:

Հետաքրքիր է բալաբցիների ճակատագիրը: Նրանք Խոյթի Քաջերանց սահմաններում են, անունով քուրդ են, բայց լեզվով, սովորությամբ, բացառությամբ չունեցած կրոնները, «բոլորովին հայ են»¹: Վերջին քահանայի վաշխառությունից զզված՝ սպանում են նրան և քառասուն տարի մնում անհովիվ: Ի վերջո, քաղաքական անմխիթար կոիվներից հոգնած, Բալաք անունով շեյխի թախսանձանքով «քուրդ անունն են առնում, ոչ Մահմեդ և ոչ Քրիստոս ճանաչելու պայմանով: Այսօր էլ նույնն են»²:

Բագրատունյաց անկումից հետո շատերն օտարացան իրենց արմատներից: Առաջին հայացքից ազատվում էր ուրացողը, բայց անգամ Մահմեդի դրոշը կրելով էլ շատերը չփրկվեցին: Ուրացողներն անկարող էին «սրտովին փարել Ղուրանին, երկրպագել Մահմեդին», ուստի սարերը բարձրացան, **խոսեցին քրդի լեզուն, հագան նրա զգեստը... (ընդգծումն իմն է, - Վ. Գ.)** եղան հարստահարիչ ավազակներ: Այսպես, «աճեցին ու զարգացան ցած սկզբունքներ, քայքայեցավ հայ-քաղաքակրթության բարձրագույն շենքը, խորտակեցավ հպարտ փառքը, հայությանից օտարացած, հարստահարիչ, դահիճ եղան հոգեհավասար հարազատներին»³:

Սեյլանը խոսում է *սեփական թագավորությունը կորցրած, պապմության հեղեղների դեմ միայնակ մնացած առանձին ցեղային միավորների մասին, որոնք այլևս երկրի մասին մտածելու հնարը չունեն, նրանք ինչ-որ կերպ ցանկանում են պահել իրենց ինքնությունը*: Այդ ճանապարհին կորուստները մեծ են: *Ավարտվում է Սասնա տան հերոսների պապմությունը, ցեղի ոգին փորձում է սեփական արյան, ինքնության խորխորատներում գուրգուրել վերածնության հավապը*: Նա համբերությամբ սպասում է իր ժամին, երբ պարտադրված դիմակի տակ կարթնանա կենդանի մարդը՝ երբեմնի ներդաշնակությանը հասնելու ներքին բնազդով:

Հավատափոխության խնդիրը Սեյլանի համար կարևոր նկատառում է: «Խան Միրան» երկում այս հարցը կենտրոնական տեղ ունի, «Խան Միրան պարսից մինչև վերջը համար պարսիկ, մեզ համար միայն հայ էր և հայ մեռավ» /7/:

Թեև խոսքը պարսկանալու մասին է, սակայն դրանից հարցադրման էությունը չի փոխվում: Պարտադրված հավատափոխությունը երկատեղ մարդու ներաշխարհը: Տեսանելի արարքները տեղափոխվեցին մարդու ներաշխարհը: Ինքնությունը պահելը դարձավ առաջնային՝ առանց այլևս բանականների բախումների:

Սեյլանի՝ երևույթների ընկալման ժամանակը ներկան է: Ավանդությունը, որ պապմվում է, արդեն չունի բանահյուսությանը բնորոշ, ներկայից զարված պապմություն: Անցյալն այլևս սովորական տեղեկատվություն չի, որ ասվում է, այն ուղղակիորեն նախորդում է ներկային: Ավանդազրույցը հնարավորինս մոտ է ներկային: Անցյալն ամբողջությամբ առկա է ներկայում, ավանդությունը այլևս չունի

¹ Անդ, 41:

² Անդ:

³ Անդ:

սահմանագիծ, այն բաց է ներկայի առաջ: Ավանդությունը տարանջատված չի ներկայից, քանի որ Մուշեղի ցեղի ներկայացուցիչը՝ պատանին, ավանդույթի կենդանի ներկայությունն է, որ իրականության, պայմանների անելանելիության հետևանքով դարձել է հավատափոխ, բայց սպասում է հարմար պահի՝ ինքնությունը իր ողջ ուժով դրսևորելու:

Ասենք, որ հավատքի հարցը ինչպես «Պարսից պատերազմ»-ում, այնպես էլ «Տարոնի պատմության» մեջ մեծ տեղ է գրավում: «Տարոնում» շատ են օրինակները, որտեղ հայերը հաղթում են բազմամարդ թշնամուն, քանի որ նրանք մշտապես առաջնորդվում են սրբին ուղղված աղոթքներով: Այսպես, երբ «Նիհորճեն (Նիխորճեսը) Որմիգդին սպանողը, գումարելով պարսկական ութսուն հազարանոց մի բանակ, եկավ Մուշեղի վրա: Մուշեղը հայոց զորքերին քաջալերելով՝ հազիվ կարողացավ համոզել պատերազմի մեջ մտնելու: Զորքին հորդորեց միաբերան սուրբ Կարապետին իրենց օգնության կանչել: Եվ միահամուռ կերպով (այդպես կանչելով) հարձակվեցին պարսիկների վրա: Տերը թշնամիներին նրանց ձեռքը մատնեց»¹:

Արդեն նոր պայմաններում Մուշեղի սերունդները Սեյլանի ներկայացրած ավանդություն-գրույցների մեջ հիմնական կռվան դիտում են իրենց հավատքը, ավելի ճիշտ՝ դրան վերադառնալու անհրաժեշտությունը:

Աբեղյանը ժամանակի մեջ տեսնում է, թե «Տարոնի պատերազմ»-ը ինչպես է պատմական նոր դեպքերի ու անձերի ազդեցության տակ փոխվել՝ Մուշեղի ու Վահանի տեղ անցել է Դավիթը, պարսիկների տեղ անցել են արաբացիները և ապա՝ Մըսրա մելիքները, Տարոնի տեղ՝ նրա կից Սասունը»²:

Ընդունելով այս դիտարկումները, այսուհանդերձ դժվար է հավատալ, որ հետագայում տեղի ունեցած գործընթացները չազդեցին «Սասնա ծռերի» ընդհանուր կառույցի վրա, որովհետև խոսքը միայն արձանագրված պատումների մասին չէ, որտեղ քաջությունը իր շուրջը համախմբեց մնացյալ մեծ ու փոքր պատմությունները և մասնավորապես Դավթի ճյուղում դրսևորվեց որպես հերոսականություն:

Ավելի տեսանելի իրադարձությունները, որոնք զգալիորեն կապված էին պատմության արհավիրքներում ձեռք բերված ու նաև ապագայի հաղթանակաների հետ, ժողովուրդն ավելի փայփայեց Դավթի կերպարը՝ որպես պատմության մատուցած դժվարությունները հաղթահարող հերոսի, անհնարինը իրականություն դարձնող հերոսական նախնիների հետնորդը: Բայց «Սասնա ծռերը» սրանով չի ավարտվում: Ի հայտ է գալիս նոր ժամանակ՝ Միերի նկարագրով ու ողբերգությամբ, անհատի ինքնագիտակցության բարձր աստիճանով, որ մերժում է ընդունված տիեզերակարգը և գնում ինքության բավիղներով՝ սեփական էության մեջ պահպանելու, ապա նորովի վերապրելու երբեմնի կորցրած ներդաշնակությունը:

¹ Մամիկոնյան Հովհ. , էջ 64:

² Մանում Աբեղյան, ԵՐԿԵՐ, Գ. , Ե. , 1968, 472:

Ժողովրդի հիշողության մեջ քրդերին դիմակայելու պահանջը դառնում է զգալի: Ասացող Մանուկ Թորոյանը, որ Խասսուրում հովիվ է եղել, մշտապես կռվի է բռնվել քուրդ հոտաղների հետ.

Մըր ուժ չպատեր քրդերուն,

Մենք լը կըսինք.

-Խոզը՛լ Մհեր յիգեր աշխարք,

Մհերի տղե մի էղներ,

Ազնանցորդի, օր բերինք,

Էդ քրդերու հախսեն յիգենք¹:

Սա ընդհանուր տեքստից դուրս: Իսկ էպոսի տարբերակներում, քրդացման ընթացքը, որ ներկայացնում է Սեյլանը, չէր կարող իր արտահայտությունը չգտնել: Անարդար աշխարհի արհավիրքներից փրկվելու համար սասունցիները իրենց տարազն ու նաև հավատը փոխեցին՝ չկործանվելու համար: Այս հանգամանքը՝ **կերպարանափոխության** ուղիով արտահայտված է էպոսում: Առաքել Շակոյանի տարբերակում Մհերը հանդես է գալիս իրեն ոչ հատուկ հագուստով.

«Են ինչ որ Դավիթն ա, խայի գեյմն ա.

Են ինչ որ ջահիլ տղեն ա, կռապաշտի գեյմն ա...»²:

Մհերի ողբերգությունը պայմանավորված է և ինքնության կորստի վախով: Նա զգեստափոխված է, թեև Դավիթն այդպես խաբելու նպատակ չունի: Հանգամանքների բերումով է զգեստափոխված, և դա նրա ներաշխարհի հավասարակշիռ վիճակի մասին չի խոսում:

Թերևս ավելի կարևոր են Ավդալ անունով հերոսի և Փոքր Մհերի առնչության թեմաները: Ավդալը հանդես է գալիս էպոսի չորս պատումներում: Հ. Նրգեյանի Ժ պատումում Ավդալը ասում է, որ ինքը Մըսրա թագավորի շատ մոտ մարդն է, «իմ անունս ծուռ ու ուժեղ Ավդալ կանվանեն»: Հիմա լսել է, որ Մըսրա թագավորը Մհերին սպանել է քարկոծելով, իսկ նրա հայրը Ադրա Մեյիքի պատերազմի ժամանակ Ավդալի եղբայրներից ու ազգականներից է սպանել: Հիմա, երբ Մհերը չկա, գոնե նրա գերեզմանին ձեռքի փայտով խփի:

Մհերն սպանում է Ավդալին, հագնում նրա հագուստները և **կերպարանափոխվում**, ներկայանում է Մըսրա թագավորին, զբաղվում շատակերությամբ, ոսկորներով վնասում թշնամիներին: Վերադառնում է կնոջ՝ Գոհարի մոտ, վկայում, որ Մհերը ողջ է: Այնուհետև մասնակցում է սասունցիների կողմից կազմակերպված հոգեհացին: Ի վերջո նա ստանում է իր ձին, ընդունում նախկին կերպարանքը, սասունցիների հետ կոտորում թշնամուն: Եթե Սեյլանի երկում Մուշեղի սերնդի ներկայացուցիչը, որ քրդացած է և համոզված, որ իր ցեղը նորից վերադառնալու է իր ինքնությանը, հասնելու է նախկին փառքին, ապա վերոհիշյալ

¹ Սասնա ծոեր, Երևան, 1977, էջ 248

² Սասնա ծոեր, Բ հատոր, մաս երկրորդ, Երևան, 1951, էջ 164:

տարբերակում Միերը Ավդալի կերպարով հանդես է գալիս որպես այլազգի, մասնակցում իր հոգեհացին, ապա և վերածնվում որպես Միեր:

Ս. Հակոբյանի ԺԲ պատումում ևս Միերը սպանում է Ավդալին, կերպարանափոխվում, մասնակցում քրիստոնյաների՝ իր պատվին տրվող հոգեհացին: Այստեղ նա հայերին բացահայտում է իր ով լինելը:

Նույն կերպարանափոխությունը կա նաև Մ. Թորոյանի «Սասունա ծռեր» պատումում: Միերը ծպտված մտնում է թշնամու զորքի մեջ: Ծպտված այցելում է Գոհարին և ամեն անգամ նրանից ցանկանում են Միերի մասին տեղեկություն իմանալ: Ս. Աբաջյանի պատումում ևս Միերը հագնում է Ավդալի շորերը:

Բառարաններում արձանագրված այս անվանումը ունի անհոգ, խենթ, ապուշ, դերվիշ, ճգնավոր իմաստները: Դրանք կապվում են արաբերենի, պարսկերենի, նաև թուրքերենի հետ: Բայց բավականին լայն է դրա տարածվածությունը քրդերի մոտ: Քրդերենում այն հնչում է որպես «Աբդալ» և նշանակում է Աստծո ծառա:

Հայկ Համբարձումյանը, խոսելով այս հերոսի մասին, ասում է, որ «դժվար է ճշգրտորեն որոշել այս կերպարի ծագումն ու գործառույթները»:¹

Եվ իրապես այս հերոսը, թվում է, չի բռնում էպոսի գործողության տրամաբանությանը, բայց նստած է չորրորդ ճյուղի հենքում: Այն լավագույնս ցուցադրում է Փոքր Միերի ողբերգությունը: Արտաքին թշնամիները թեև վերացված են, բայց հոգևոր մաքառումները հարկադրել են հերոսին դեմ գնալ իր իսկ ինքնությանը: Միերն առանձին պահերին դառնում է Ավդալ (քուրդ), բայց միևնույն է՝ հետ վերադառնալու, ինքն իրեն գտնելու հույսը նրան երբեք չի լքում: Միջավայրը ևս սպասում է իրական Միերին և համոզված է, որ անասելի փորձություններից հետո անգամ հերոսը վերադառնալու է: Ավդալի կերպարը միջոց է Միերի՝ թեկուզ ժամանակավոր քրդացման ընթացքը ներկայացնելու համար:

Օգտագործված գրականության ցանկ

1. «Մուրճ», 1895, հ. 5:
2. Մանուկ Աբեղյան, Երկեր, Ա, Ե. , 1966:
3. Մամիկոնյան Հովհ., Պատմութիւն Տարոնոյ :
4. Մանուկ Աբեղյան, Երկեր, Գ. , Ե. , 1968, 472:
5. «Սասնա ծռեր», Երևան, 1977, էջ 248:
6. «Սասնա ծռեր», Բ հատոր, մաս երկրորդ, Երևան, 1951:
7. Համբարձումյան Հ. , Սասնա ծռեր, Պատում, Մոտիվ, Գրքային ավանդույթ, ԵՊՀ հրատ. , 2018:
8. Սեյլան (Արշակ Մատոյան), Սասուն, Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, 1990:

¹ Համբարձումյան Հ. , Սասնա ծռեր, Պատում, Մոտիվ, Գրքային ավանդույթ, ԵՊՀ հրատ. , 2018, էջ 143:

SEYLAN'S "SASSOUN" AND THE EPIC POEM "DAREDEVILS OF SASSOUN"

GRIGORYAN VACHAGAN

Doctor of Philology, Professor

Head of the Chair of Armenian Language and Literature, Lecturer,

Gavar State University

e-mail: vachik-grigoryan@mail.ru

The tragic figure in the last part of the epic is Mher. He no longer has the ability to act or create; Mher imposes a new form of existence, primarily guiding humanity toward a path of self-discovery and rebirth. This occurs when weapons are set aside, when all previous times are in the past, and a new era of spiritual values and elevated human qualities is approaching. The process of self-reflection becomes primary in Mher's character. He is dressed in Kurdish clothing, which is unlikely to have been by his own will. The religious conversion has left significant consequences for the essence of the Sassoun people. Mher's character acquires new dimensions. The Raven Stone serves not only as a place to protect the qualities of one's identity from tumultuous times but also embodies an internal demand for self-reflection and a return to the roots of one's identity. The tradition presented by Seylan directly hints at the necessity of returning to one's own identity. The Armenian folk novel could not fail to respond to this reality. Epic scholars have not addressed the connections between Seylan's "Sassoun" and the "Daredevils of Sassoun" epic poem in their studies.

Meanwhile, Seylany's work reveals, both with popular traditions and the epic struggles of heroes fighting against enemies in Sasun, the enduring and persistent nature of the people's epic struggles. The similarities between "Sassoun" and "Daredevils of Sassoun" are evident both directly and indirectly. These similarities exist not only in the human characters and in the actions but also in their underlying philosophy: the transformation of faith adds new layers to the portrayal of the heroes.

Keywords: *Seylan, "Daredevils of Sassoun", Artsruni, Gnuni, transformation, "Persian War", "War of Taron", religious conversion, Vardapet Martirosyan, Saint Karapet.*

«САСУН» СЕЙЛАНА И ЭПОС «САСНА ЦРЕР»

ГРИГОРЯН ВАЧАГАН

Доктор филологических наук, профессор
Заведующий кафедрой армянского языка и литературы ГГУ

Преподаватель ГГУ
электронная почта: vachik-grigoryan@mail.ru

Трагический персонаж последней ветви эпоса – Мгер. Он больше не способен действовать и творить. Мгер обязывает новый способ существования, который в первую очередь ведёт человечество по пути самопознания и возрождения. Это время, когда оружие откладывается в сторону, когда прежние времена прошли и наступило новое время – время духовных ценностей и высоких человеческих качеств.

Процесс самопознания становится ключевым в образе Мгера. Он носит курдскую одежду, и вряд ли это было его собственным выбором. Смена веры оставила глубокий след в сущности сасунца. Образ Мгера обретает новую силу. Вороний камень – это место не только для защиты своей личности от смутных времён, но и для самопознания, внутренней потребности вернуться к истокам своей идентичности. Легенда, представляемая Сейланом, прямо указывает на необходимость возвращения к своей подлинной сущности. Армянский народный роман не мог не затронуть эту реальность. Однако исследователи эпоса редко обращали внимание на связь между произведением Сейлана «Сасун» и эпосом «Сасна црер».

Между тем, творчество Сейлана как записью народных традиций, так и с героями, сражающимися с врагом в Сасуне, раскрывает ход упорной и продолжительной эпической борьбы народа. Сходства между «Сасун» и «Сасна црер» очевидны как в прямом, так и в косвенном смысле. Общность есть как в смысле человеческих характеров, их действий, так и во внутренней философии: изменение убеждений прибавляет новые слои в описание персонажей.

Ключевые слова: Сейлан, «Сасна црер», Арцруни, Гнуни, метаморфоза, «Персидская война», «Таронская война», новообращенный, Вардапет Мартиросян, Святой Карапет.

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 11.09.2024թ.:

Հոդվածը գրախոսվել է 20.09.2024թ.:

Ընդունվել է տպագրության 30.11.2024թ.: